ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

ՄԱՆՈՒԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը ավելի քան 110 տարվա քաղաքական կենսագրություն ունի: Կուսակցությունը, ինչպես հայտնի է, հիմնադրվել է դժվարին պայմաններում, երբ հայ ժողովուրդն իր պատմական հայրենիքի տարբեր մասերում՝ Արևմտյան Հայաստանում և Արևելյան Հայաստանում, չուներ անկախ պետականություն:

Հնչակյան կուսակցության ստեղծման ակունքներում էին կանգնած նրա յոթը հիմնադիր անդամները՝ Ավետիս Նազարբեկյանը (Լեռենց), Մարիամ (Մարո) Վարդանյանը (Նազարբեկյան), Ռուբեն Խանազատը, Գաբրիել Կաֆյանը (Շմավոն), Քրիստափոր Օհանյանը, Լևոն Ստեփանյանը, Գևորգ Ղարաջյանը: Հնչակյան կուսակցության առաջին ծրագրում, որը հրապարակվեց 1888 թվականին[1], հստակորեն ձևակերպված էին կուսակցության գործունեության նպատակները: Կուսակցության ծրագրում գլխավոր նպատակն էր համարում Արևմտյան Հայաստանում և Արևելյան Հայաստանում ազգային-ազատագրական պայքար մղելն ու հայկական անկախ պետականության ստեղծումը: Ազգային ազատագրական պայքարի միջոցով ազատ, անկախ և միացյալ Հայաստան ստեղծելու գաղափարի հետ մեկտեղ հնչակյանները կարևոր խնդիր էին համարում նաև թե՛ Արևմտյան Հայաստանում, թե՛ Արևելյան Հայաստանում գոյություն ունեցող միապետական, բռնատիրական կարգերը սահմանադրական կարգերով փոխարինելը:

Հնչակյան կուսակցությունը հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության հարցերը ձգտում էր կապել նաև Արևելյան Հայաստանի և Արևմտյան Հայաստանի սահմաններում բնակվող մյուս հալածված ժողովուրդների ազգային-ազատագրական, հեղափոխական շարժումների հետ:

Ինչպես հայտնի է՝ Օսմանյան կայսրությունում երիտթուրքական հեղաշրջումից հետո երկրի սոցիալ-տնտեսական կյանքում և ազգային քաղաքականության մեջ դրական փոփոխություններ տեղի չունեցան: Ընդհակառակը, էլ ավելի վատթարացավ երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, ծայրահեղորեն սրվեցին ազգամիջյան հարաբերությունները:

Երիտթուրքերի կառավարման օրոք արևմտահայության սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակի ծայրահեղ վատթարացման մասին է վկայում Կոստանդնուպոլսում

Ռուսաստանի դեսպան Նիկոլայ Գիրսը: 1912թ. նոյեմբերի 26-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությանն ուղղված իր զեկույցի մեջ նա գրում էր. «Համիդյան վարչակարգի կողմից հայերի նկատմամբ իրականացրած դաժան ու զանգվածային կոտորածներից հետո, երիտթուրքերի կառավարման ժամանակ հայության վիճակը անելանելի դարձավ: Հայ բնակչության նկատմամբ բռնի մահմեդականացման, ավազակային հարձակումների, կոտորածների ու թալանի կազմակերպիչներն ու իրականացնողներն օրենքի և իշխանությունների առջև երբեք պատասխանատվություն չէին կրում և չէին պատժվում»:[2]

Այդ ժամանակաշրջանում հայերի վիճակի մասին պատկերացում է տալիս Էրզրումում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս Շտրիտտերը: Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանությանն ուղարկած զեկուցագրում նա նշում էր. «Չնայած սահմանադրությանը, որ արդեն մտցված է երկու տարի առաջ և թուրքերի ու հայերի իրավունքների թվացյալ հավասարեցմանը, վերջիններս թուրքերի հետ ընդհարվելիս՝ միշտ մեղավոր են դուրս գալիս և պատժվում ամենայն խստությամբ՝ ըստ հնացած սկզբունքի. հայ է, ուրեմն մեղավոր է»:[3]

Ստեղծված պայմաններում Հնչակյան կուսակցությունը որոշակի փոփոխության ենթարկեց իր ծրագրային դրույթներն ու խնդիրները: Դրանք քննարկման ենթարկվեցին 1909 թվականի հուլիսի 12-ին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած կուսակցության 6-րդ ընդհանուր պատգամավորական ժողովում, որն արտոնված էր երիտթուրքական իշխանությունների կողմից:

Պատգամավորական ժողովը բավականին ներկայացուցչական էր: Նրա աշխատանքներին մասնակցում էին նաև ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Եգիպտոսից, Բուլղարիայից, Պարսկաստանից և այլ վայրերից ժամանած Հնչակյան գործիչները: Պատգամավորական ժողովը նոր փոփոխություններ կատարեց կուսակցության ծրագրի մեջ. սոցիալիստ-հեղափոխական Հնչակյան կուսակցությունը պաշտոնապես վերանվանվեց «Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցություն»:

Ի տարբերություն առաջին ծրագրի, որտեղ հնչակյանները պահանջում էին Արևմտյան Հայաստանն անջատել Օսմանյան կայսրությունից և ստեղծել Ազատ, Անկախ ու Միացյալ հայկական պետություն, կուսակցությունը տվյալ ժամանակահատվածում նպատակահարմար գտավ բավարարել ինքնավար Հայաստանի պահանջով:[4] Հնչակյանների նոր ծրագրում կատարված այդ փոփոխություններն ունեին մարտավարական բնույթ, և դա ամենևին չէր նշանակում, թե նրանք ընդհանրապես հրաժարվել էին Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան ստեղծելու իրենց ռազմավարական նպատակից: Նոր ծրագրով հանչակյանները մի կողմ էին դնում պայքարի հեղափոխական մեթոդները և սոցիալական ու քաղաքական բնույթի խնդիրների լուծման նպատակահարմար ուղիներ էին համարում խորհրդարանական միջոցները: Իրենց նպատակներին հասնելու համար նրանք պայքարի ընդունելի ձևեր էին համարում նաև ազգային, մշակութային և կրթական հաստատությունների, արհեստակցական, գյուղացիական միությունների, կոոպերատիվների հասարակական ակտիվության բարձրացումը, գործադուլային պայքարը և այլն: Ազգային հարցերի վերաբերյալ հնչակյանների դիրքորոշումները նոր ծրագրում ձևակերպված էին այսպես. «Ազգային խնդիրներու նկատմամբ պաշտպանել բոլոր ազգություն-

ներու քաղաքական լիակատար իրավունքները: Ժխտել մեկ ազգի ստորադասումը մյուսին: Ազգություններն որպես պատմական անհատականություններ ազատորեն զարգանալու, առաջադիմելու ամեն պայմաններ պիտի ունենա, առանց որևէ սեղմունի մեկի կողմեն:

Ընկերային, տնտեսական, քաղաքական ոչ մի խոչընդոտ չպիտի ըլլա ազգությանը մը անկաշկանդ առաջադիմության և բարգավաճման առջև, այսպես որ ազգություններու բացարձակ հավասարությունը և ինքնորոշման սկզբունքն անձեռնընմխելի և անժխտելի իրավունք կհանդիսանա»:[5]

Հնչակյաններն իրենց այս ծրագրում իրավացիորեն նշում էին, որ Օսմանյան կայսրությունում տվյալ ժամանակահատվածում իշխանության գլուխ կանգնած վարչակարգը բոլորովին չի արտահայտում կայսրության սահմաններում բնակվող ազգերի շահերը և աղետալի ներգործություն է ունենում դրանց ճակատագրի վրա: Նրանք կայսրության տարածքում ապրող ժողովուրդների սոցիալական և ազգային արմատական խնդիրների լուծման միակ ուղին համարում էին սոցիալիստական կարգերի հաստատումը: Հնչակյանները նոր ծրագրում լիովին պաշտպանում էին քաղաքացիների անձի և գույքի անձեռնմխելիությունը, խղճի, մամուլի և խոսքի ազատությունները: Նրանք գտնում էին, որ Թուրքիայում պետք է ստեղծվի Լիազոր օրենսդիր ժողով, որն իրավասու կլինի «քննարկելու և վճռելու երկրի քաղաքական, տնտեսական ու հասարակական բոլոր հարցերն ու խնդիրները»:[6] Ծրագիրը պաշտպանում էր տեղական կառավարման մարմինների ամենալայն ինքնավարության սկզբունքը:

Նպատակահարմար էր համարվում ընտրություններին 20 տարեկանից սկսած բոլոր քաղաքացիների մասնակցությունը, առանց սեռի, ազգային և կրոնական խտրության: Ընտրությունները պետք է լինեին ուղղակի, ընդհանուր, հավասար ու գաղտնի: Ծրագիրը հանդես էր գալիս համաժողովրդական հանրաքվեի օգտին, որը ժողովրդավարական քաղաքական համակարգի կարևորագույն պայմաններից մեկն է: Թուրքերեն լեզուն պետք է ճանաչվեր որպես պետական լեզու, դրա հետ մեկտեղ նշվում էր, որ յուրաքանչյուր ոչ թուրք ժողովուրդ պետք է իրավունք ունենա օգտագործել իր մայրենի լեզուն դատարաններում և պետական կառավարչական մարմիններում:

Հնչակյանները հանդես էին գալիս ճորտատիրությունն իսպառ վերացնելու պահանջով, կոչ էին անում իրենց օրինական տերերին վերադարձնել նրանցից ապօրինաբար խլված հողատարածքները, օժանդակություն ցույց տալ փոքրածավալ հողատարածքներ ունեցող գյուղացիներին, ամեն կերպ կասեցնել այնպիսի օրենքների ընդունումը, որոնք արգելակում էին գյուղի տնտեսական առաջընթացը:

Ծրագրում ամրագրված էին այնպիսի կարևորագույն և առաջադիմական սկզբունքներ, ինչպիսիք էին՝ բանվորների համար ութժամյա աշխատանքային օրվա պահանջը, գիշերային աշխատանքային օրվա համար վարձավճարի սահմանումը, արտադրության վտանգավոր ոլորտներում կանանց աշխատանքի արգելումը, մինչև 14 տարեկան երեխաներին աշխատանքի մեջ ներգրավման բացառումը: Լուրջ կարևորություն էր տրվում Թուրքիայում գործող անարդարացի հարկային համակարգի բարեփոխման խնդրին: Գյուղացիները պետք է ազատվեին ամեն տեսակի անարդարացի տուրքերից, որոնք ծառայեցվում էին մեծահարուստների, զանազան պետական թալանչի պաշտոնյաների անձնական շահերին:

Պետք է արմատավորվեին առաջադիմական հարկերը:

1910թ. հունվարին «Միություն և առաջադիմություն» կուսակցության ներկայացուցիչները պաշտոնապես ճանաչեցին Հնչակյան կուսակցության այս նոր ծրագիրը, որը, ի տարբերություն նախորդ ծրագրի, ընդհանուր առմամբ հանդուրժելի էր նրանց համար:[7]

Հարկ է նշել, որ Հնչակյան ծրագրում կատարված մարտավարական փոփոխություններն իրագործվել էին մինչև կուսակցության 6-րդ ընդհանուր պատգամավորական ժողովը (1909թ. հուլիսի 12) և Տաճկաստանի մասնաճյուղերի առաջին պատգամավորական ժողովը (1910թ.): Դեռևս 1908թ. հոկտեմբերի 20-ին, այսինքն երիտթուրքական հեղաշրջումից (1908թ. հուլիսի 23) երեք ամիս անց, հնչակյան կուսակցության կենտրոնական վարչության լիազոր անդամներ Ստեփան Սապահ-Գյուլյանի և Համբարձում Պոյաճյանի (Մեծն Մուրադ) ստորագրությամբ Կ. Պոլսում վերոնշյալ փոփոխություններով հրապարակվում է ՍԴՀԿ ծրագիրը:[8]

Հնչակյանների գործունեությունը չէր սահմանափակվում միայն Արևմտյան Հայաստանով և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերով, այն ծավալվում էր նաև Ռուսաստանում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, մերձավոր արևելյան երկրներում: Ռուսաստանի տարածքում, մասնավորապես Կովկասում Հնչակյան Կուսակցության կառույցներից ամենախոշորը՝ Բաքվի կազմակերպությունն էր:[9]

Ռուսական կայսրությունում գործող Հնչակյան կառույցները հայ զանգվածների մեջ պրոպագանդում էին սոցիալիստական գաղափարներ, և այդ հողի վրա համագործակցության եզրեր էին գտել ռուսական հեղափոխական շարժման ղեկավարների, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության, հատկապես բոլշևիկների հետ:

Այս ամենով հանդերձ հնչակյանների գործունեության ամենակարևորագույն խնդիրը մնում էր արևմտահայության ազգային և սոցիալական ազատությունը: Ուստի նրանք չէին բացառում, որ չարքաշ ժողովրդի հալածանքները և հարստահարությունները շարունակական բնույթ կրելու դեպքում իրենք պայքար կսկսեն երիտթուրքական վարչակարգի դեմ:[10] Դեպքերի հաջորդ ընթացքը հավաստեց, որ երիտթուրքերը շարունակում են համիդյան հայահալած քաղաքականությունը, որն իր դրսևորումը գտավ 1909թ. ապրիլին, Ադանայում: Ադանահայության կոտորածները, որոնց զոհ գնաց ավելի քան երեսուն հազար հայ «հանդիսացավ արևմտահայության ցեղասպանության գլխավոր փորձը»:[11]

Երիտթուրքական կառավարողները բացահայտ հանդես էին գալիս կայսրության ոչ թուրք ժողովուրդների, առաջին հերթին՝ արևմտահայության բռնի ձուլման ու բնաջնջման ծրագրերով:

1910թ. օգստոսի 23-ին Մոնաստիրի անգլիական փոխհյուպատոս Արթուր Հերոնը Կ. Պոլսում Անգլիայի դեսպան Լոութերին ուղղված զեկույցում մեջբերում էր Սալոնիկում տեղի ունեցած երիտթուրքերի գաղտնի խորհրդակցությունում Թալեաթ փաշայի ունեցած ելույթի հետևյալ հատվածը. «Դուք գիտեք, որ սահմանադրության համաձայն հաստատված է մուսուլմանների և գյավուրների հավասարություն, բայց դուք բոլորդ միասին և յուրաքանչյուրդ առանձին գիտեք և զգում եք, որ սա անիրագործելի իդեալ է: Շարիաթը, մեր ողջ անցյալ պատմությունը, հարյուր հազարավոր մուսուլմանների զգացմունքները և նույնիսկ հենց իրենց՝ գյավուրների զգացմունքները, որոնք համառորեն դիմադրում են իրենց օսմանացմանը,

անհաղթահարելի խոչընդոտ են ներկայացնում իրական հավասարություն հաստատելու համար... Ուստի և չի կարող հավասարության մասին նույնիսկ խոսք լինել, մինչև որ հաջողության չհասնենք կայսրության օսմանացման մեր խնդրում...»:[12]

Դրանից մեկ տարի անց, 1911թ. սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 9-ը Սալոնիկում տեղի ունեցավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության չորրորդ համագումարը, որին մասնակցում էին երիտթուրքական գրեթե բոլոր ակտիվ գործիչները՝ Էնվերը, Թալեաթը, Հալիլը, Սաղլքը, Նազիմը, Զիա Գյոք Ալպը և այլոք: Ղեկավարվելով պանթուրքիզմի գաղափարախոսությամբ, համագումարը հատկապես Նազիմի և Թալեաթի պնդմամբ առաջ քաշեց կայսրության հպատակ ժողովուրդներին ձուլելու, թուրքացնելու խնդիրը:[13]

Յո. Լեփսիուսը մեջբերում է կատարում Սալոնիկի համագումարի ընդունած որոշումից հետևյալ հատվածը. «Վաղ թե ուշ մեր տիրապետության տակ գտնվող ժողովուրդները պետք է թուրքացվեն, սակայն արագացման համար դա հարկավոր է իրագործել զենքի միջոցով... Կայսրության մյուս ազգությունները արժանի չեն ուշադրության... նրանք կարող են պահպանել իրենց կրոնը, բայց ոչ իրենց լեզուն: Թուրքական լեզվի պարտադիր լինելը կարևոր միջոց է կայսրության մյուս ազգերին թուրք ազգի մեջ ձուլելու համար»:[14]

Դեռևս 1907թ. դեկտեմբերի 27-29-ը Փարիզում տեղի ունեցած Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ համագումարում հիմք դրվեց երիտթուրքերի ու Հ. Յ. Դաշնակցության դաշինքին, որը պահպանվեց մինչև 1913թ.: Սահմանադիր Ռամկավար և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունները ևս աջակցում էին երիտթուրքերին: Մասնավորապես՝ Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը 1908թ. սեպտեմբերի 12-ին հրապարակած իր պաշտոնական հայտարարության մեջ համերաշխության և համագործակցության ջերմ ցանկություններ էր արտահայտում իթթիհադականների նկատմամբ: Հայտարարության մեջ գրված էր, որ իթթիհադականները «դեռ երեկ հրեշավոր բռնակալության մը դեմ արիաբար մաքառեցան ու այսօր ազատության անհողդողդ ախոյանը մնալ կշարունակեն անխտրական գնահատելի ոգով»:[15] Այդ հայտարարության մեջ իթթիհադականների կողմից իրագործված հեղաշրջումը Վերակազմյալ հնչակների կողմից բնութագրված էր, որպես «համերաշխ ու հավաքական շարժում»:[16] Վերակազմյալները երիտթուրքական հեղաշրջումից հետո հրաժարվեցին Հայաստանի ազատության գաղափարից և կանգնեցին Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման դիրքերում: Փաստաթղթերում ընդգծված էր, որ «Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը որևէ անջատողական ձգտում և նպատակ չունի»:[17] Վերակազմյալները հանդես էին գալիս արևմտահայերի միայն «կրոնական և կրթական առանձնաշնորհումները»[18] պաշտպանելու օգտին:

Մինչև առաջին աշխարհամարտը երիտթուրքերի հանցավոր քաղաքականության ու գործողությունների նկատմամբ հակակշիռ ուժ է ստեղծվում նաև բուն թուրքական շրջաններում: 1911թ. նոյեմբերի 21-ին կազմավորվում է իթթիհադականներին ընդդիմադիր «Ազատություն և համաձայնություն» («Հյուրիեթ վե իթիլաֆ») կուսակցությունը, որի շուրջը համախմբվում են երիտթուրքական վարչակազմի նկատմամբ ընդդիմադիր հունական և բուլղարական կազմակերպությունները: 1912թ. փետրվարի

3-ին հնչակյանների և իթիլաֆականների միջև կնքվում է համագործակցության պայմանագիր:[19] Այդ փաստաթղթերի ստորագրումը պայմանավորված էր նրանով, որի իթթիհադականներն իրենց գործողություններով խափանում էին Արևմտյան Հայաստանում անցնացվելիք բարեփոխումները: Իրենց հայատյաց քաղաքականությամբ ու գործողություններով երիտթուրքերը կտրականապես մերժում էին Արևմտյան Հայաստանում նախատեսվող բարեփոխումների գաղափարը:[20] Իսկ հնչակյանները հույսեր ունեին, որ իթիլաֆականների հետ սերտ հարաբերություններ հաստատելով կարող են համատեղ ուժերով պայքարել իթթիհադականների քաղաքականության և գործողությունների դեմ: Համաձայնագրի տեքստում նշված էր. «Օսմանյան պետության բաղկացուցիչ ազգությունների քաղաքական իրավունքներն ամբողջությամբ պետք է պաշտպանվեն և լիովին պետք է մերժվի մեկ ազգի քաղաքական ստորադասումը մյուսի կողմից»:[21] Համաձայնագրի մեջ կարևոր տեղ էին գրավում նաև այնպիսի պայմաններ, ինչպիսիք են. հայոց պատրիարքարանի հնուց ի վեր ունեցած առանձնաշնորհումների պահպանումը, Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ մյուս վայրերում հայկական դպրոցների գործունեության ապահովումը, բանվորների և հողազուրկ գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը բարելավվելու նպատակով օրենքների ստեղծումն ու կիրառումը:[22]

Իթիլաֆականների հետ համագործակցելու հնչակյանների որոշումը, կարծում ենք, ճիշտ էր. նրանք դաշինքի մեջ մտան այն քաղաքական ուժի հետ, որը պայքարում էր բացահայտ հայատյաց քաղաքականություն վարող իթթիհադականների դեմ:

Իթիլաֆի ղեկավար՝ իշխան Սաբահեդդինը Ս. Սապահ-Գուլյանի հետ հանդիպման ժամանակ ասել է. «Ես ուղղակի զարմացած եմ, ինձ հետ էլ շատ եվրոպացիներ: Հայ ազգն ինչպե՞ս կարող է հարգանք պահանջել, երբ Ադանայի կոտորածից հետո էլ, դեռ մեծամասնությամբ, Իթթիհադի կողմն է բռնում: Դաշնակցականներն ինչպե՞ս սեղմեցին իթթիդահական արյունոտ, եղեռնագործ ձեռքը և նրանց հետ համաձայնություն կնքեցին: Հայ ազգը, որ անհաշտ դիրք պիտի բռներ, ընդհակառակը՝ ամենից ավելի զիջողը, տեղի տվողը եղավ...: Սա ուղղակի զարհուրելի է և շատ վատ վկայական մի ազգի բարի համբավի համար...: Այս շրջանի մեջ հայ ազգի պատիվը փրկեցին միայն Ս. Դ. Հնչակյանները»:[23] Հնչակյաններն առարկելով իշխանին ասում էին, որ պետք չէ մեղադրել ողջ հայ ժողովրդին, քանի որ հայության մեծ մասը ատելությամբ էր լցված իթթիհադականների նկատմամբ:

Հարկ է նշել սակայն, որ երբ Իթիլաֆը 1912թ. հունիսի 9-ին հեղաշրջման միջոցով իշխանությունը վերցրեց իր ձեռքը, վարում էր այնպիսի քաղաքականություն, որն էապես չէր տարբերվում Իթթիհադի քաղաքականությունից: Այդուհանդերձ, երբ 1912թ. սեպտեմբերի 26-ին տեղի ունեցավ հնչակյանների՝ Թուրքիայում գործող մասնաճյուղերի 2-րդ պատգամավորական ժողովը, կուսակցության ղեկավարությունը որոշեց շարունակել համագործակցությունն Իթիլաֆի հետ:[24]

Այն ժամանակ, երբ հայրենիքի և ժողովրդի ճակատագրով լրջորեն մտահոգված հայ քաղաքական միտքը ստեղծված ծանրագույն կացությունից դուրս գալու ելքեր էր որոնում, միջազգային իրադրությունը գնալով բարդանում էր: 1912թ. աշնանը Բալկանյան 4 երկրները՝ Չեռնոգորիան, Սերբիան, Հունաստանը, Բուլղարիան պատերազմական գործողություններ սկսեցին՝ նպատակ ունենալով ազատագրել թուրքական բռնակալության տիրա-

պետության տակ գտնվող բալկանյան տարածքները: Պատերազմն ավարտվեց բալկանյան պետությունների հաղթանակով: Ի դեպ՝ ինչպես հայտնի է՝ այդ պատերազմին մասնակցություն ունեցավ հայ կամավորներից բաղկացած մի վաշտ՝ Անդրանիկի ու Գարեգին Նժդեհի գլխավորությամբ:

Բալկանյան պատերազմը ցույց տվեց, որ իթթիհադական կառավարողներն իրենց քաղաքականության ու գործողությունների մեջ դրսևորում են բացահայտ ազգայնամոլություն: Այդ հանգամանքը բնականորեն երկյուղ էր առաջացնում արևմտահայության շրջաններում: Ամենևին էլ պատահական չէ, որ հնչակյանները, դաշնակցականները և ռամկավարները պատերազմի ծագման համար մեղավոր էին համարում թուրքական կառավարողներին:[25]

Ելնելով հայության ծանր վիճակից և զգալով արյունահեղ պատերազմի մոտալուտ շունչը, հնչակյաններն իրենց կենտրոնական վարչության անունից 1913թ. հունվարի 30-ին Փարիզում հանդես եկան Եվրոպայի տերություններին ու ժողովուրդներին ուղղված կոչով, ուր ասվում էր, որ Հնչակյան կուսակցությունը, որն իր հիմնադրման օրից քսանհինգ տարիներ շարունակ հանդիսանում է հայ ժողովրդի շահերի և արդարացի ձգտումների արտահայտիչը, խիստ բացասաբար է տրամադրված ցանկացած նվաճողական, իմպերիալիստական պատերազմի նկատմամբ, այն համարելով ոճրագործություն:

«Մենք կրում ենք մեր սրտում անհաշտ և անսահման ատելութիւն դէպի այն պատերազմները, որոնց նպատակն է յափշտակութիւն, նուաճում և մի ժողովուրդի տիրապետութիւնը միւսի վրայ», - ասված էր կոչի մեջ:[26]

Առաջին աշխարհամարտի նախօրյակին Հնչակյան կուսակցության գործունեության մեջ որոշակի տեղ էր հատկացված Օսմանյան կայսրության տարածքում ապրող քրդերի հետ համագործակցության ընդհանուր եզրեր գտնելու և երիտթուրքական վարչակարգի դեմ պայքարելու խնդրին: Համագործակցության համար բարենպաստ մթնոլորտ էր ստեղծում վերափոխված ծրագիրը: Ս. Սապահ-Գուլյանի վկայությամբ քրդական գործիչ Բեդիրխան բեյն իր համախոհների հետ ստեղծել էր քրդական ակումբներ, որոնք համագործակցում էին Հնչակյան կուսակցության կառույցների հետ:

Հնչակը մեծ ջանքեր գործադրեց հայ-քրդական մերձեցման ուղղությամբ, սակայն երիտթուրքական իշխանությունները կարողացան խափանել ստեղծված երկխոսությունը: Ս. Սապահ-Գուլյանը գրում էր. «Այս ուղղութեամբ բաւականին աշխատանք թափեցինք. քրդերին թուրքերից բաժանելը շատ մեծ հեռանկարներ էր բացում մեր առաջ. բայց ցեղայնութիւնը, դարեւոր ոխակալութիւնները, թշնամութիւնները, թրքական խարդաւանքների ցանցերը, որ այդ ցեղերին շատերի սիրտ արդէն իր մագիլների մէջն էին առել, մեզ անկարող դարձրին որոշեալ եւ դրական արդիւնքներ ձեռք բերելու: Արեցինք այն, ինչ-որ կարող էին եւ մեր միջոցները թոյլ էին տալիս»:[27]

Քրդերին հայերի դեմ հրահրելը թուրքական պետական քաղաքականություն էր: 1911-1912թթ. Վանում հնագիտական պեղումների ժամանակ Իոսիֆ Օրբելին մոտիկից ծանոթացել է Մոքսի քրդերի հետ և գրչին հանձնել իր տպավորությունները: Նա գրում էր, որ «հայ ժողովրդի ոխերիմ թշնամին ոչ թե քուրդ ժողովուրդն է, այլ նրան հրահրող թուրքական վարչակազմը և, որ այնպիսի մեկուսացած շրջաններում, ինչպիսին Մոքսն է, քրդերը և հայերն ապրում են բարի համերաշխությամբ»:[28] Այո, ամենից առաջ թուրքական իշխանությունների հրահրմամբ էր, որ ինչպես Սուլթան

Համիդի վարչակարգի, այնպես էլ երիտթուրքերի կառավարման պայմաններում քրդերը թուրք կառավարողների ձեռքին գործիք հանդիսացան ընդդեմ հայության: 1913թ. ապրիլի 10-ին Վանից ուղարկված մի հաղորդագրության մեջ նշված էր, որ տեղի կուսակալը՝ ծագումով քուրդ Իզզեթ բեյը «քրդերին զինում է կառավարության զենքերով: Ժողովուրդը միշտ կոտորածի երկյուղի մեջ է: Հայը և քուրդը համապատասխան դիրք բռնած սպասում են պատեհ առիթի, առաջինը՝ կոտորվելու, երկրորդը՝ կոտորելու: Հայ ժողովուրդն անզեն է, քուրդը, թուրքը ոտից գլուխ զինված, ազդանշանի են սպասում»:[29]

Վաղօրոք մշակված հայերի բռնի տեղահանության ու բնաջնջման երիտթուրքական ծրագրում մեծ տեղ էր հատկացվում քրդերի մասնակցությանը: Առաջին աշխարհամարտի նախօրյակին զորավար Անդրանիկը, լիովին իրազեկ Արևմտյան Հայաստանում ստեղծված իրավիճակին, հայտարարում էր. «Տիգրանակերտից մինչև պարսից սահմանագլուխը 160 հազար զինված քուրդ կա: Երիտթուրքերը նրանց զինաթափ չեն անում և պահում են հարմար պահին մեզ կոտորելու»:[30] Միանգամայն ճիշտ է նկատել Ս. Պողոսյանն իր «Քրդերը և Հայկական հարցը» աշխատությունում, որ իշխանության գլուխ անցնելու առաջին իսկ օրից երիտթուրքերն օգտագործեցին պետական մեխանիզմի հնարավորությունները հայերի ու քրդերի միջև թշնամությունը խորացնելու, իրենց հայաջինջ քաղաքականության իրագործմանը քրդերին մասնակից դարձնելու համար:[31] Այդ ամենը հայտնի էր արևմտահայության քաղաքական շրջաններին:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ի հայտ եկան երիտթուրքերի քաղաքականությունից և գործելակերպից դժգոհ ընդդիմադիր թուրք քաղաքական գործիչներ, որոնց հնչակյանները համագործակցության ձեռք մեկնեցին: Երիտթուրքական վարչակարգի նկատմամբ ընդդիմադիր տրամադրություններ ունեցող թուրք գործիչներից էր մասնագիտությամբ իրավաբան Մանիասազադե Ռեթիկ բեյը: Նա հնչակյանների ուշադրությունը գրավել էր դեռևս Գում-Գափուի ցույցի կապակցությամբ, երբ կարողացել էր ջանքեր գործադրել և մեղմացնել սուլթանական վարչակարգի կողմից ցույցի կազմակերպիչների նկատմամբ ընդունված դատավճիռը: Ռեթիկ բեյը հավանություն էր տալիս հնչակյանների ծրագրին, գաղափարախոսությանը և սերտ հարաբերություններ էր հաստատել հնչակյանների հետ: Հնչակյանների օժանդակությամբ նա հիմանդրել էր առաջադիմական գաղափարներ կրող մի կազմակերպություն, որի մեջ ներգրավվել էին թուրք, չերքեզ, ալբանացի երիտասարդներ: Եվ պատահական չէ, որ խորհրդարանական ընտրությունների ժամանակ Կոստանդնուպոլսում հնչակյաններն իրենց կուսակցության կողմից առաջադրեցին Մանիսազադե Ռեթիկ բեյի թեկնածությունը:[32]

Հնչակյանները պարբերաբար վերլուծում էին Հայկական հարցում մեծ տերությունների, մասնավորապես՝ Ռուսաստանի քաղաքականությունը և դրա հիման վրա անում համապատասխան հետևություններ: «Հնչակ» թերթը 1913թ. արծարծում էր Հայաստանի ինքնավարության խնդրում Ռուսաստանի դիրքորոշման հարցը: Թերթի հրապարակումներից մեկում նշված էր, որ, ի տարբերություն եվրոպական մեծ տերությունների, Ռուսաստանը, ելնելով իր ռազմավարական շահերից, կնպաստի ինքնավար Հայաստանի ստեղծմանը:[33] Ըստ «Հնչակ»-ի, ապագա ինքնավար Հայաստանի կազմում պետք է լինեին ոչ միայն հայկական վեց նահանգները, այլ

նաև Կիլիկիան, Ուրֆան, Ադանան, Գոզան, Ճեպելը-Պերեքեթը, Մերսինը, Մարաշը: Այս տեսակետն արտահայտելիս «Հնչակ»-ը գտնում էր, որ ինքնավար Հայաստանի ստեղծումը կարող էր բխել Ֆրանսիայի և Անգլիայի պետական շահերից, բայց ինքնավար Հայաստանի գոյությունը կարող էր պահպանվել միայն ու միայն ռուսական պետականության հովանավորության ներքո: «Այդ իրավունքը, - նշում էր թերթը, - ամենից առաջ պատկանում է Ռուսաստանին, որը... չի հակասում հայ ազգի քաղաքական շահերին»:[34]

Հնչակյան գործիչներից մեկի՝ Սյունիքի արտահայտած տեսակետով եվրոպական մեծ տերությունները պատրաստ են գործնական քայլեր ձեռնարկել հայությանը հուզող խնդիրների լուծման ուղությամբ, բայց դրա համար առաջին հերթին հայությունն ինքը պետք է համաշխարհային հանրության առջև բարձրացնի և գործնական քայլերով լսելի դարձնի իր համազգային հիմնահարցերը: Նա գտնում էր, որ եթե հայ ժողովուրդն ու նրա ազգային շահերին արտահայտող քաղաքական կուսակցությունները հայրենիքի ազատագրության սուրբ գործի համար կենտրոնացնեն իրենց բոլոր կարողությունները և այդ առաքելությունն իրականություն դարձնելու համար վճռականորեն նետվեն պայքարի մեջ, ապա այդ դեպքում եվրոպական պետությունները հաշվի կնստեն հայ ժողովրդի հնարավորությունների և բարձր ազգային ինքնագիտակցության հետ և ամեն կերպ կօժանդակեն նրան: «Եվրոպական դիպլոմատիան չէ, որ իր պարտականությունն ու պաշտոնը համարի քաղաքական աշխարհում հայկական խնդիր հուզելու»[35], - գրում էր Սյունիքը: Նա նշում էր, որ եվրոպական խոշոր պետությունները «պիտի իրենց ուժերը նետեն Հայաստանի ազատության կռվի մեջ, և այն ժամանակ դիպլոմատիան էլ առիթ, տրամադրություն կունենա զբաղվելու հայկական խնդրով»:[36]

Պաշտպանելով Արևմտյան Հայաստանի քաղաքական ինքնավարության գաղափարի իրագործման անհրաժեշտությունը Ս. Սապահ-Գուլյանը Թուրքիան բարեփոխելու ամենահիրական ճանապարհը տեսնում էր ոչ միայն արևմտահայությանը, այլև մյուս ոչ թուրք ժողովուրդներին ինքնավարություն տալու մեջ: Նա դրականորեն էր գնահատում 1860թ. Կոստանդնուպոլսում ընդունված արևմտահայության ազգային սահմանադրությունը, գտնելով, որ այն իր բոլոր թերություններով ու անկատարություններով հանդերձ, արևմտահայ ազգաբնակչության համար ինքնավարության հասնելու որոշակի հնարավորություններ էր ընձեռել: «Հիմք ունենալով արդեն եղածը, մնում է նրան տալ այն մասերը, ինչ-որ պակասում են՝ ճանաչել հայ սահմանադրության մասնակի գործադրական իշխանության իրավունքները, ընդարձակել նրա սահմաններն ավելի դեմոկրատական հիմունքներով Հայաստանի ամբողջ տարածության վրա, դա ամենադյուրին միջոցը կտա Հայկական հարցը լուծելու»:[37]

Երբ 1912թ. Ռուսաստանի նախաձեռնությամբ բարձրացվեց Արևմտյան Հայաստանում բարեփոխումների իրագործման խնդիրը, հայ դասական երեք կուսակցությունները՝ Հնչակյանները, Դաշնակցականները և Ռամկավարները հանդես եկան միասնական դիրքորոշմամբ և Կոստանդնուպոլսի հայ պատրիարքարանի հետ ջանքեր գործադրեցին հայկական բարեփոխումների իրագործման համար:[38]

Արևմտյան Հայաստանում բարեփոխումների հարցում հնչակյանները ցուցաբերեցին մեծ ակտիվություն: Նրանք երիտթուրքական կառա-

վարողներին ներկայացրեցին իրենց պահանջները, որոնց մեջ հիմնականն Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջն էր:

Նախապատերազմյան ժամանակաշրջանում հնչակյանները շարունակում էին աշխատանքն արևմտահայության մեջ սոցիալիզմի գաղափարների տարածման ուղղությամբ: Դեռևս 1910թ. Կոստանդնուպոլսում ստեղծվել ու գործում էր հնչակյանների «Սոցիալ-դեմոկրատական ուսանողական միությունը», որի «Կայծ» ամսագրում (1911-1914թթ.) լուսաբանվում էին սոցալիստական մտքի ու շարժման կարևորագույն հարցեր:

Վերլուծելով հնչակյանների տեսական-քաղաքական գործունեությունը Ա. Համբարյանը մատնանշել է, որ արդեն 1913թ. Ս. Սապահ-Գուլյանը, Ա. Նազարբեկը և այլոք այն համոզմունքին էին, որ թուրքական տիրապետող վարչակարգը հնարավորություն չի տալու բարեփոխել երկիրը և իրագործել սոցիալիստական գաղափարներ:[39]

Հայ քաղաքական կուսակցությունները միասնաբար հանդես եկան Թուրքիայի 1913թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Նրանք հայ պատրիարքարանի հետ երիտթուրքական իշխանություններից պահանջեցին 17 պատգամավորական տեղ: Այս հարցում մեծ ջանքեր գործադրեցին հնչակյանները: Երկարատև բանակցություններից հետո թուրքական կողմը համաձայնվեց հայերին տրամադրել 13 տեղ:[40]

Նախապատերազմյա շրջանում հնչակյանների դիրքորոշումները ցայտուն արտահայտություն են գտել 1913թ. Կոստանցայում (Ռումինիա) տեղի ունեցած կուսակցության 7-րդ պատգամավորական ժողովում: Պատգամավորները գտնում էին, որ երիտթուրքերը ոչ մի դրական տեղաշարժ չեն կատարել հայ ազգաբնակչության կյանքում: Ավելին, նրանց վարած ծայրահեղ հետադիմական քաղաքականությունը ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ, խտրականությունը և վայրագությունն է՛լ ավելի էին սրել երկրի ներքին հակասությունները: Հաշվի առնելով, որ կայսրությունում լեգալ քաղաքական գործունեություն ծավալելու հնարավորություն չկար, ժողովը որոշեց, որ կուսակցությունը պետք է անցնի անլեգալ գործունեության: Ժողովը լիովին պաշտպանեց Հայաստանի քաղաքական ինքնավարության պահանջը, հստակություն մտցրեց հայ իրականության մեջ գործող քաղաքական մյուս կազմակերպությունների հետ Հնչակի հարաբերությունների հարցում: Կուսակցության բոլոր կառույցները, ղեկավար մարմինները հանձնարարություն ստացան որևէ հարաբերություն չունենալ «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ:

Ինչպես հայտնի է՝ մինչև 1914թ., երեսուն տարուց ավելի, աշխարհի հզոր պետություններն իր պատմական հայրենիքում բնակվող արևմտահայությանը բարեփոխումներ իրականացնելու հույսեր էին ներշնչում, բայց իրենց խոստումները գործի չէին վերածում: 1914թ. հունվարի 26-ին Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև ստորագրվեց պայմանագիր Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ իրագործելու վերաբերյալ: Արևմտահայությանն այս անգամ էլ չվիճակվեց բարեփոխումների իրականացման ճանապարհով իր պատմական հայրենիքում ունենալ իր խաղաղ կյանքը, աշխատանքը և մարդկային արժանապատվությունը պաշտպանող երաշխիքներ: Երիտթուրքական կառավարողները ձախողման մատնեցին բարեփոխումների ծրագրի իրականացումը: Այդ ճակատագրական, դժվարին ու բարդ պայմաններում, 1914թ. հուլիսի 24-ին, երբ Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուն մնացել էր

շատ կարճ ժամանակ, Կոստանդնուպոլսում տեղի ունեցավ Հնչակյան կուսակցության Թուրքիայում գործող մասնաճյուղերի 3-րդ պատգամավորական ժողովը, որը, ելնելով երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունից ու գործողություններից, որոշեց արևմտահայությանը կոչել ինքնապաշտպանությանը՝ հնարավոր բոլոր միջոցներով:[41] Նախընթաց շրջանում հնչակյան որոշ կառույցներ Կոստանդնուպոլսում գործող կուսակցության վարիչ մարմնին մեղադրում էին իշխող երիտթուրքական վարչակարգի նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք դրսևորելու մեջ: Ժողովը, փաստորեն, հրավիրվեց կուսակցության վարիչ մարմնի գործունեությունից դժգոհ մասնաճյուղերի պարտադրանքով: Պատգամավորական ժողովը, որը տևեց մինչև նույն թվականի օգոստոսի վերջերը, նպատակ ուներ որոշել, թե Թուրքիայում գործող մասնաճյուղերը ինչպիսի՞ վերաբերմունք պետք է ունենան երիտթուրքական իշխանությունների նկատմամբ: Ընդունվեցին կարևոր փաստաթղթեր, որոնցից մեզ է հասել միայն մի շրջաբերական: Փաստաթղթերի ամբողջ թղթածրարը բռնագրավվել էր թուրքական իշխանությունների կողմից: Շրջաբերականի մեջ նշված էր. «Համաշխարհային պատմութեան մէջ նմանը չտեսուած, խիստ լուրջ և կարեւոր շրջանի մը մէջ կը գտնուինք ժամանակէ մը ի վեր քաղաքակիրթ աշխարհը պատերազմի խեղդիչ ճնշման տակ կը տառապի: Անցեալ յոռի վարչակարգերուն չարիքին արդիւնքն է ներկայի տագնապը: Յիշեալ աշխարհասասան փոթորիկին՝ Թուրքիոյ և անոր ենթակայ ազգերու և մանաւանդ մեր դժբախտ ժողովուրդի ճակատագրին վրայ կատարելիք ահռելի աւերի աղրիւնքը պիտի կրինք շուտով»:[42]

Պատմական դաժան ճակատագիրը բազմաչարչար հայ ժողովրդին շուտով պետք է նետեր համաշխարհային արհավիրքի՝ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ: Արյունալի պատերազմում հայ ժողովրդի, նրա բոլոր քաղաքական կուսակցությունների հետ Հնչակյան կուսակցությունը նույնպես անցնելու էր այդ դաժան արհավիրքների միջով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Տե՛ս Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1963, Ա. հատոր, Պեյրութ, 1963, էջ 32:

[2] АВПР, Посольство в Константинополе, д. 2678, л. 15, հայերին թարգմանությունը զետեղված է «Հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածուում, Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ», Երևան, «Հայաստան», 1991, էջ 267:

[3] ՀԱԱ, Քաղվածքների ֆոնդ, գ. 33, թ. 88:

[4] Տե՛ս «Ծրագրի Սօցիալ Դէմոքրաթ Հանչակեան Կուսակցութեան (Տաճկաստանի համար)», Կ. Պոլիս, 1910, էջ 15:

[5] Նույն տեղում, էջ 14-15:

[6] Նույն տեղում, էջ 3:

[7] Համբարյան Ա. Ս. Հայ հասարակական քաղաքական միտքն արևմտահայության ազատագրության ուղիների մասին. XIX դարի վերջ – XX դարի սկիզբ, Երևան, «Հայաստան», 1990, էջ 355:

[8] Ծրագրի այդ տարբերակը հայտնաբերել ենք մեր ուսումնասիրության ընթացքում: Ծրագիր սոսիալ դեմօքրաթ հնչակեան կուսակցութեան (Տաճկաստանի համար), Կ. Պոլիս, 1908:

[9] Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1963, Ա. Հատոր, Պէյրութ, 1962, էջ 215-216:
[10] Տե՛ս «Հնչակ», 1908, թիվ 6-7:
[11] Werner E. Die Armenierqreuel 1915/1916 – ein armenisches Greuelmärchen? "Zeitshriftfur Geschichtswissenschaft", XXI Jahrqang, 1973, Heft 2, Berlin, s. 29.
[12] Թալեաթի հայտարարության վերոհիշյալ քաղվածքը բերված է անգլիական դիվանագիտական փաստաթղթերից: "British Documents on the origins of the war, 1898-1914. Edited by G. P. Gooch and Harold Temperley. Vol. ix. The Balkan Wars. Parts I The prelude. The Tripoli war. London, 1933. pp. 208-209". Հայերեն թարգմանությունը զետեղված է «Հայերի ցեղասպանությունն Օսմանյան կայսրությունում», փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան», 1991, էջ 266:
[13] Տե՛ս Гурко-Княжин В. История революции в Турции, М., 1973, с. 200:
[14] Lepsius J. Bericht über die Laqe des armenischen Volkes in der Türkei. Tempelverlaq in Potsdam, 1916, s. 200.
[15] ՀԱԱ, ֆ. 282, g. 1, գ. 2, թ. 1:
[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում:
[18] Նույն տեղում:
[19] Նույն տեղում, ֆ. 4045, g. I, գ. 167, թ. 1:
[20] Տե՛ս Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), материалы политического архива Кайзеровской Германии, под редакцией Вардкеса Микаеляна, Ереван, 1995, с. 134-135:
[21] ՀԱԱ, ֆ. 4045, g. 1, գ. 167, թ. 1:
[22] Նույն տեղում:
[23] Սապահ-Գիլիեան Ս. Պատասխանատուները (Բ. տպագրութիւն), Պէյրութ, 1974, էջ :
[24] Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1963, Ա. Հատոր, Պէյրութ, 1963, էջ 345:
[25] Տե՛ս «Դրոշակ», 1912, հոկտեմբեր, N 10 (227):
[26] Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1963, Ա. Հատոր, Պէյրութ, 1963, էջ 352:
[27] Սապահ-Գիլիեան Ս. Պատասխանատուները (Բ. տպագրութիւն), Պէյրութ, 1974, էջ 275-276:
[28] Юзбашян К. Академик Иосиф Авгарович Орбели, М., 1964, с. 15.
[29] «Հնչակ», 1913, N 4-5:
[30] Ժամկոչյան Ա. Զորավար Անդրանիկը կպատասխանե իր հակառակորդներին, Փարիզ, 1945, էջ 21:
[31] Տե՛ս Պողոսյան Ս. Կ. Քրդերը և Հայկական հարցը, Երևան, «Հայաստան», 1991, էջ 176:
[32] Սապահ-Գիլիեան Ս. Պատասխանատուները (Բ. տպագրութիւն), Պէյրութ, 1974, էջ 278:
[33] Տե՛ս «Հնչակ», 1913, N 2:
[34] Նույն տեղում, N 3:
[35] Նույն տեղում, N 4-5:
[36] Նույն տեղում:
[37] Նույն տեղում, N 2:
[38] Գաբիկեան Խորէն. Հայ ազատագրական շարժումներ, Անթիլիաս, 1976, էջ 223:
[39] Համբարյան Ա. Ս. Հայ հասարակական քաղաքական միտքն արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Երևան, «Հայաստան», 1990, էջ 359:
[40] Զաւէն արքեպս. Պատրիարքական յուշերս. Վավերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, տպ. Նոր աստղ, 1947, էջ 37:

[41] Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1963, Ա. Հատոր, Պէյրութ, 1963, էջ 374:
[42] Նույն տեղում, էջ 375:

Резюме

Социал-демократическая гнчакская партия накануне Первой мировой войны.

Манук Степанян

После младотурецкого переворота в Османской империи в социал-экономической и национальной политике страны положительных изменений не произошло.

Накануне Первой мировой войны в Западной Армении и во всех армянских поселениях Турции положение армян стало крайне невыносимым.

Продолжая антиармянскую политику Абдула Гамида II, младотурецкие правители организовали и осуществили новые массовые истребления западных армян. По характеристике известного немецкого востоковеда Э. Вернера, истребление более 30-ти тысяч армян в Адане "явилось главной репетицией геноцида армян".

Исходя из тяжелого положения западных армян и чувствуя грозящий дух кровопролитной войны, 24 июля 1914 года, когда до начала Первой мировой войны оставались считанные дни, в Константинополе состоялось третье представительное совращие гнчакской партии, которое принимает решение об организации самообороны западных армян всеми возможными средствами. Надвигающаяся гловальная война, в скором времени, привела вы многострадальный армянский народ к невиданной трагедии, а гнчакская партия с другими политическими партиями армян прошла вы через этот кровавый ужас, во имя спасения армянского народа.

Summary

Social-Democratic Hunchak Party on the Eve of World War I.

Manuk Stepanyan

After the Young Turks revolution in Ottoman Empire no positive changes took place in the social-economic and national policy of the country. On the eve of World War I the situation of Armenians became still more intolerable in all areas of Western Armenia and Turkey inhabited by Armenians.

Continuing Abdul Hamid's policy of Armenian depressions the Young Turk leaders organized and executed new massacre of Western Armenians. As described by German well-known orientalist E. Werner, massacre of more than 30 thousands Armenians "became the general rehearsal of the genocide of Western Armenians".

Coming out of the grave condition of Western Armenians and feeling the gust of upcoming bloody war, on 24 July 1914, when World War I was about to fire up, the third delegated assembly of Hnchak Party took place in Constantinople, which took a decision to resort to the self-defense of Western Armenians by all means.

The cruel historical destiny would soon throw the long-suffering Armenian people into a universal calamity, and the Hnchak Party together with the other Armenian political parties would pass through bloody tribulation.